ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 259- Ա **25 սեպտեմբերի 2015 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N 66-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2015 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Նորատուսի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորման ձևով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Նորատուսի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» N 66-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված հավելված 1-ի 5-րդ հոդվածի 2-րդ կետի «ապրիլի 20-ը» բառերը փոխարինել «հոկտեմբերի 2-ը» բառերով,

2) որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետի «հավելված 4-ը և» բառերը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ